

ՆԱՄԱԿՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Մոսկւա. 10 հոկտեմբերի

Ռուս հասարակական և մտաւոր կեանքի հոսանքները և երեւոյթները ըմբռնելու համար, այդ կեանքը զիտողը անխուսափելի կերպով հանդիպում է այն հիմնաքարերին, որոնք նոր կերպարանք տւին Ռուսաստանին, նոր դարեշրջան կազմեցին նորա պատմութեան մէջ: Հասկանալի է, որ մեր խօսքը այն վերանորոգմունքների մասին է, որ կատարւեցին հանգուցեալ Աղէքսանդր II միջոցով: Թէպէտ արդէն 25 տարի է լրանում, երբ այդ առաջին և վերին աստիճանի զգոյշ փորձերը եղան՝ պատուաստել եւրոպական հաստատութիւնները ուսու հողի վերայ, բայց մինչև այժմն էլ զոքա օրւայ խնդիր լինելուց չեն դադարել և չեն կորցրել իրանց թարմութիւնը: Ուրեմն սպասելի է, որ ընթերցողը համբերութեամբ գուցէ և հետաքրքրութեամբ վերաբերւի, եթէ մենք տանք այդ վերանորոգումների կարճ նկարագիրը:

Անցեալ թագաւորութեան բազմաթիւ ընթացքների թւում դատաստանի ու տեղային վարչութեան ընթացքների, ճորտերի ազատութիւնից յետոյ, առաջին տեղն են բռնում: Ալեքսանդր II-ը, 1861 թւի փետրւարի 19-ի բարձրագոյն հրովարտակով ազատութիւն տալով 20 միլիոն ճորտերի, ստեղծեց նոր Ռուսաստանը: Պէտք էր այդ նորաստեղծ միակերպ զանգւածին նոր ոգի ներշնչել, պէտք էր արմատապէս վերանորոգել ստրկատիրական սկզբունքի վերայ հիմնւած շէնքը: Ձէր կարելի անփոփոխ թողնել նախարեթորմական Ռուսաստանի (допетформенная Русь) հիմնարկութիւնները, որոնք սերտ կապւած էին նորան, խմբուած էին ստրկատիրական ոգով: Սկսեց

րեֆորմների շրջանը, սկսեց Ռուսաստանի նոր կեանքը: 1863 թ-ին համարեա բոլորովին վերացեց մարմնական պատիժը և համալսարանները ստացան նոր կանոնադրութիւն, որ գործադրուով էր մինչև 1884 թ-ի նորագոյն կանոնադրութեան հրատարակելը: 1864 թ-ին ռուս ժողովուրդը ստացաւ համադասակարգային տեղային ինքնավարութիւն, զեմստովօ (յունւարի 1-ին), հրատարակեց «Ալեքսանդր II-ի դատաստանական օրէնսգիրքը» — СѸДРОННО ССТАВН (նոյեմբերի 20-ին), որ աւետուով էր ժողովրդին «արագ, արդար, ողորմած և բոլորի համար հաւասար գաւաստան»: 1865-ին հրատարակեց նոր ցենզուրական կանոնադրութիւնը, որ մամուլին բաւական արտօնութիւններ տւեց: 1870-ին քաղաքները ստացան ներքին ինքնավարութիւն նոր հիմունքների վերայ: 1874-ի յունւարի 1-ին ղինուրական ծառայութիւնը պարտադիր դառաւ բոլոր դասակարգերի համար՝ ծագման վերայ հիմնւած արտօնութիւնները փոխարինելով ուսման արտօնութիւններով: 1878-ին բացեցին կանանց բարձրագոյն կուրսերը:

Րեֆորմների ու նորամուծութիւնների այդ երկար շարքով առաջին տեղը բռնում են նոր դատաստանը և զեմստովօն, որ թարգմանելու համար զժլար է բոլորովին համապատասխան բաւ գտնել հայերէնում: Կա, ընդհանուր առմամբ, տեղական ինքնավարութիւն է նշանակում: Առանց փոքր ի շատէ որոշ գաղափար ունենալու 1864 թ-ի այդ ռեֆորմների վերայ, անկարելի է հասկանալ ոչ միայն անցեալ և այս տարւայ գլխաւոր օրէնքները, որոնց մասին ես վերևը չիշեցի, այլ և Ռուսաստանի ներքին կեանքը ընդհանրապէս: Այդ պատճառով ես անհրաժեշտ եմ համարում, նախ քան նոր փոփոխութիւնների մասին խօսելը, համառօտ կերպով ծանօթութիւն տալ այդ ռեֆորմների մասին:

Դատաստանական վերանորոգութեան հետ «Մուրճ»-ի ընթերցողները կարող են մանրամասն ծանօթանալ, կարդալով «Մուրճ»-ի 1889 թ-ի № 1 և № 3 համարներում տպւած պ. Կ. Եաղուբեանի «Դատաստանական վերանորոգութիւն» վերնագրով յօդւածը: Այդ վերանորոգութեան գլխաւոր նորամուծութիւններն էին. — հաւասարութիւն օրէնքի առաջ, դատաստանական և վարչական իշխանութիւնների բաժանւածութիւնը, կամ ուրիշ խօսքով՝ դատարանի ինքնուրոյնութիւնը, դատաստանի անկախութիւնը կամ դատաւորների ան-

փոփոխութիւնը—несменяемость судей (դատաւորին պաշտօնանկ կարելի է անել միայն քրէական դատաստանի ենթարկելուց ու մեղադրող դատավճիռ կայանալուց չեռոյ), ղռնբաց, հրապարակական և հակաձառական—состязательный—դատավարութիւն, առաջւայ ասիական դատավարութե տեղ, երզւեալ և հաշտարար դատաւորների ինստիտուտ (судь присяжныхъ и мировой институтъ):

Ինչ է երզւեալ դատաւորների ինստիտուտը կամ հաստատութիւնը:

Երզւեալ դատաւորները մասնակցում են դատաստանին միայն քրէական գործեր քննելիս. նրանք վճռում են միայն մեղադրեալի մեղաւորութիւնը կամ անմեղութիւնը. եթէ երզւեալ դատաւորները ձայների մեծամասնութեամբ վճռել են թէ մեղադրեալը մեղաւոր է այս կամ այն շանցանքում, պետական դատարանը կը որոշի օրէնքի համաձայն պատժի աստիճանը: Երզւեալ դատաւորները մասնակցում են նահանգական դատարանի (окружный судъ) նիստերին այն գործերի քննութեան ժամանակ, որոնք դատապարտեալին զրկում են կոչման իրաւունքներից կամ սահմանափակում են այդ իրաւունքները, և դատաստանական պալատի նիստերին՝ մամուլին ու մի քանի պաշտօնական անձնաւորութիւնների ծառայութեան վերաբերեալ շանցանքները քննելիս: (1889 թւի յուլիսի 3-ի օրէնքը երզւեալ դատաւորների իրաւասութեան շրջանը սահմանափակեց՝ հանելով նորա իրաւասութիւնից մի շարք քրէական գործեր, որ այժմ ղանազան դասակարգերի ներկայացուցիչների մասնակցութեամբ են վճռուում): Երզւեալ դատաւորները ընտրուում են տեղական բնակիչների թւից՝ առանց դասակարգի խորութեան: Գաւառական զեմսկից ժողովը (уездное земское собрание), որ կազմում է բոլոր դասակարգերի ներկայացուցիչներից, ընտրում է յանձնաժողովներ, որոնք կազմում են երզւեալ դատաւորների ընդհանուր և հերթական ցուցակներ: Ընդհանուր ցուցակի մէջ մտնում են բոլոր տեղային, ուսւսահայտակ, 25—70 տարեկան և օրէնքով որոշուած պսշտօն կամ հասարակական դիրք և կամ թէ ստացուածք, եկամուտ ունեցող բնակիչները՝ եթէ Ֆիզիքական արատ չ'ունին և բարոյապէս անբիծ են: Այդ ընդհանուր ցուցակից յանձնաժողովները ընտրում են օրէնքով որոշուած թւով անուններ և կազմում են առաջիկայ տարւայ համար հերթական

ցուցակ, նոյնպէս և լրացուցիչ ցուցակ (запасный список) Յետոյ այդ ցուցակները բաժանում են չորս-չորս հաւասար մասի (քառամեակներին) և յայնում են ցուցակ ընկած անձերին թէ որ ամիսներին նոքա պէտք է պատրաստ լինեն, դատարանից հրակէր ստանալուն պէս՝ գալ իրանց պարտականութիւնները կատարելու համար: Հերթական ցուցակները ուղարկում են դատարանը և յայտարարում են տեղացին պաշտօնական լրագրի մէջ: Դատարանի ամեն մի նստաշրջանին (երկու շաբաթ) վիճակով ընտրւում են հերթական ցուցակի քառամեակից 30 հոգի, որ անհրաժեշտ դէպքերում փոխարինեն առաջիններից բացակայ եղողներին: Այդ 30 հոգին նստաշրջանի ընթացքում պէտք է այցելեն ամեն նիստ, որի սկզբում վիճակ է զգւում և այդ 30 հոգուց ընտրւում են 12 հոգի քննող գործը վճռելու համար, այնպէս որ մեղադրեալը միայն նստի սկզբում է իմանում թէ ումից է կախած իւր վիճակի որոշումը և ուրեմն մինչև անգամ կաշառելու փորձ էլ չի կարող անել: Գործի քննութեան սկզբում 12 ընտրեալ դատաւորները երգւում են, յետոյ դատարանի նախագահը բացատրում է երդեալներին նրանց պարտականութիւններն ու իրաւունքները, չիշեցնելով նրանց կոչման վսեմութիւնը: Քննութեան ու կողմերի հակաձառութեան վերջանալուց յետոյ, երդեալները հեռանում են առանձին սենեակ, ուր ոչ մի ուրիշ մարդ իրաւունք չունի մտնելու, խորհրդակցում են և վճիռ են կայացնում թէ արդեօք մեղաւոր է թէ անմեղ մեղադրեալը:

Երդեալ դատաւորները ղեկավարւում են միայն իրանց խղճմտանքով և այգպիսով մեղմացնում են չոր օրէնքի խստութիւնը, գործնական կերպով իրագործելով օրէնքի ու բարոյական սկզբունքների համերաշխութիւնը, որի բացակայութիւնը շատ դէպքերում՝ այսինքն օրէնսդրութեան յօդաձոնների ու բարոյական պահանջների ներհակութիւնը՝ այնքան ցաւ է պատճառում մարգասէր իրաւաբաններին, որոնք զլուխ են ջարդում այդ հարցը գիտնականօրէն վճռելու համար:

Հաշտարար դատաւորները չէին նշանակւում ինչպէս Կովկասում, այլ ընտրւում էին (մինչև 1889 յուլիսի 12-ի օրէնքը): Հաշտարար դատաւոր ընտրւելու համար պէտք էր տեղացի լինել, 25 տարեկանից փոքր չը լինել, ունենալ որոշ նիւթական, բարոյական և

ուսման ցննզ (գոնէ միջնակարգ ուսումնարանի վկայական): Հաշտարար դատաւորները ընտրուում էին երեք տարով: Նրանց ընտրում էին ոչ թէ տեղային հողատէրերը (ինչպէս սխալմամբ յայտնում է իւր յօդաճում պ. Կ. Եազուբեանը, № 3 եր. 496), այլ դաւառական զեմակից ժողովները, ուրեմն բոլոր դասակարգերի ներկայացուցիչները: Մայրաքաղաքներում (Պետերբուրգում ու Մոսկայում) ընտրութիւնը կատարում են քաղաքային խորհրդարանները (Дума): Ընտրուում էին երկու տեսակ հաշտարար դատաւորներ՝ մասնաշրջանային (участковый) և պատուաւոր (почтовый):

Ամեն մի գաւառ, իւր մէջը գտնւած քաղաքներով, կազմում էր մի հաշտարարական շրջան (обругь), որ բաժանւում էր մի քանի հաշտարարական մասնաշրջանների (участокъ): Մասնաշրջանային դատաւորները գառում էին իրանց մասերում և ստանում էին սոճիկ զեմակից (մայրաքաղաքներում՝ քաղաքային) զումարներից: Պատուաւոր հաշտարար դատաւորները սոճիկ չէին ստանում: Նրանք հարկաւոր դէպքերում փոխարինում էին մասնաշրջանային դատաւորներին: Բացի դրանից հաշտարարական շրջանում (обругь) եղած ժամանակ պարտաւոր էին դատել հաշտարար դատաւորների իրաւասութեան ենթակայ բոլոր գործերը այն դէպքերում, երբ երկու վիճոզ կողմերը դիմէին նոցա միջնորդութեանը, որից յետոյ նրանք (կողմերը) չէին կարող չ'ընդունել պատուաւոր դատաւորի վճիռը:

Նրջանի պատուաւոր և մասնաշրջանային դատաւորները հաւաքւելով՝ կազմում էին հաշտարար դատաւորների ժողով (сѣздъ мировыхъ судовъ), որ բարձրագոյն հաշտարարական ին ստանցիան էր: Հաշտարար դատաւորների ժողովները հաւաքւում էին որոշեալ ժամանակամիջոցներում հաշտարարական դատաքննութեան ենթակայ գործերին վերջնական վճիռ տալու համար և իբրև վճռաջինջ ատեան՝ հաշտարար դատաւորների վերջնական վճիռների վերաբերմամբ:

Անցնենք զեմտւոյին: Զեմտւոյ բաւը ծագում է земля—հող բառից: Հողը առհասարակ ուսաց կեանքում շատ մեծ դեր է կատարում: Ա. Վասիլչիկովը ¹⁾, որի ձեռնհասութեան վերայ կարելի է

¹⁾ Кв. А. Васильчиковъ.—О самоуправленія. Сравнительный обзоръ русскихъ и иностранныхъ земскихъ и общественныхъ учреждений.

վտոռահ լինել, կարծում է, թէ ռուսաց կեանքը տարբերում է ժամանակակից ուրիշ եւրոպական ազգերի կեանքից գլխաւորապէս նորանով, որ ռուսաց մէջ հողային սկզբունքը գերակշռում է անձնական սկզբունքին, որ ռուս ժողովուրդը հաւասարութիւնը հասկանում է ոչ թէ անձնական իրաւունքների ու պարտականութիւնների մէջ, այլ հողային բաժինների (НАДѢЛЪ) ու հողային տուրքերի հաւասարութեան մէջ (ЗЕМЕЛОЕ УПРАВЛЕНІЕ): Ժողովուրդը և հողը կարծես իրարից անբաժան գաղափարներ են համարում: «...Մեր պատմական կեանքի ամենանախնական ժամանակներից սկսած, Ռուսաստանում անձնական տարրը ստորադրւում է հողային տարրին, և ռուսը ոչ անհատապէս իբրև քաղաքացի, ոչ էլ ընդհանրապէս իբրև ժողովուրդ մինչև անգամ չի էլ յիշում պատմագրութիւնների մէջ...» «...զեմլեա, զեմնտվօ, զեմնկիյ մարդիկ խօսքերը գործ են ածւում ուրիշ ազգերի հայրենիք ու ժողովուրդ գաղափարների համապատասխանող գաղափարը որոշելու համար... Այդ՝ անձնական տարրի բացակայութիւնն ու հողային տարրի գերակշռութիւնը ռուսաց հասարակական կեանքի գլխաւոր երևոյթն է կազմում, որ ձակատագրական ազդեցութիւն է ունեցել նորա զարգացման վերայ... Մարդկանց սկզբում վերագրում էին հողին, յետոյ ամրացնում էին նորա վերայ (ճորտ էին դարձնում): Մարդ իւր հասարակական նշանակութիւնը ստանում էր այն հողից, որի վերայ բնակւում էր...» Զեմնտվօն նշանակում է տեղային իշխանութիւնների ու հաստատութիւնների ներքին կառավարութեան կազմակերպութիւն, որ ուրիշ տէրութիւններում անւանուում է selfgovernment, ständische Verfassung, տարբերելով նրանցից նորանով, որ ծագում է ուրիշ գաղափարից, — ներքին կառավարութեան մէջ մասնակցողները համարւում են ոչ թէ ժողովրդի, այլ հողի ներկայացուցիչներ:

Զեմնտվօն ուրեմն տեղային ինքնավարութեան ռուսական տիպն է: Տեղային ինքնավարութիւնը կոչանում է նորանում, որ տեղային գործերն ու պաշտօնները վարում ու կատարում են տեղացի բնակիչները: Մինչև 1864 յունւարի 1-ի «զեմնկիյ հաստատութիւնների կանոնադրութեան» գործադրելը, Ռուսաստանի ներքին կառավարութեան մէջ տիրապետում էր չինովնիկական, բիւրօկրատական սկզբունքը. վարչութիւնը համարեա ամբողջապէս գտնւում

էր կառավարութիւնից նշանակւած ու նորա առաջ միայն պատասխանատու աստիճանաւորների ձեռքում: 1864-ի յունւարի 1-ի օրէնքը առաւ աստիճանաւորների ձեռքից այն բոլոր գործերի վարչութիւնը, որ վերաբերում էին մասնաւոր-տեղային և ոչ ընդհանուր—պետական շահերին, և յանձնեց տեղային բնակիչներին, ի նկատի ունենալով, ինչպէս աււած է կանոնագրութեան բացատրութեան մէջ, որ ոչ ոք չի կարող այնքան եռանդով ու հոգատարութեամբ վարել մի տնտեսական գործ, որքան այն մարդը, որին պատկանում է այդ գործը, ոչոքի համար այնքան զգալի չեն լինում վատ կարգադրութիւնների հետեանքները և ոչ ոք այն աստիճան նիւթապէս չի փնասուում այդպիսի կարգադրութիւններից, որքան ինքը գործի տէրը:

Ձեմտովօի իրաւասութեան շրջանը հետեւեալն է.—գեմսկից տուրքեր, ժողովրդական տարրական կրթութիւն, առողջապահութիւն ու բժշկութիւն, բանտեր (հասարակական ու ղեմակից իշխանութիւնների, հաշտարար դատաւորների ու նրանց ժողովներից դատապարտած յանցաւորների համար), տեղային բարեկեցութեան ու բարեկարգութեան բոլոր ճիւղերը,—հաղորդակցութեան ճանապարհներ, հասարակական ինամատարութիւն, հասարակական շտեմարաններ, տեղային առևտուր ու արդիւնագործութիւն և այլն:

Կարևոր ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին գեմտովօի նախկին կազմակերպութեան հետ, որ գոյութիւն ունէր մինչ 1890 թ. յունիսի 12-ը ¹⁾: Ձեմսկից ժողովները կազմուում էին երեք տեսակ ներկայացուցիչներից՝ մասնաւոր հողատէրերի կողմից (գրանց հետ հաշուում են նոյնպէս և քաղաքներից դուրս եղած ամեն տեսակ կապիտալիստները), քաղաքացիների կողմից և գիւղական հասարակութիւնների կողմից: Քաղաքացիների ներկայացուցիչները աննշան փոքրամասնութիւն են կազմում: Ներկայացուցիչները ընտրուում են հողատէրերի, քաղաքացիների ու գիւղական հասարակութիւնների ջոկ—ջոկ հաւաքւող ընտրողական ժողովներում (Сѣвѣздѣ): Քաղաքացիների ընտրողական իրաւունքը պայմանաւորւած է որչեալ նիւթական ցենզով. այդ ցենզին համապատասխանող բոլոր քաղաքացիները

¹⁾ Яковенко. Сѣверный Вѣстникъ 1890 г. № 1 и № 3 „Наше земское представительство“.

Հաւաքուում են (ամեն մի գաւառում առանձին) ու ընտրում են իրանց կողմից ներկայացուցիչներ օրէնքով որոշուած թւով: Հողատէրերի ընտրողական ժողովներին անմիջապէս մասնակցելու իրաւունք ունեն միայն խոշոր հողատէրերը, (200—350 դեսետաին ունեցողները. հիւսիսում այդ ցենդը աւելի բարձր է, որովհետեւ հողը այնտեղ աւելի էժանէ. մանր հողատէրերը, որոնք ցենդի minimum-ի $\frac{1}{20}$ -ից պակաս ունեն, իրաւունք չունեն մասնակցելու ընտրութիւններին, իսկ $\frac{1}{20}$ -ը կամ աւելի ունեցողները Հաւաքուում են և, իրանց հողերի քանակութիւնը գումարելով, կազմում են ամբողջ ցենզեր ու դորա համեմատ թւով իրանցից ներկայացուցիչներ են ընտրում և ուղարկում մասնաւոր հողատէրերի ընտրողական ժողովներին, ուր խոշոր ու մանր հողատէրերի այդ ներկայացուցիչները ընտրում են ներկայացուցիչներ մասնաւոր հողատէրերի կողմից: Գիւղական ընտրողական ժողովները կազմում են վոլոստն ոչ ¹⁾ ժողովներում (ВОЛОСТНОЙ СХОДЪ) ընտրուած անձերից: Գրանց թիւը պէտք է լինի ոչ աւելի քան օրէնքով վոլոստնոյ ժողովներում մասնակցելու իրաւունք ունեցող գիւղացիների քանակութեան $\frac{1}{3}$ մասը և ոչ պակաս քան մի մի ներկայացուցիչ ամեն մի գիւղական հասարակութիւնից: Այդ ընտրուածները ժողովում են ու ընտրում ներկայացուցիչներ գաւառի գիւղական հասարակութիւնների կողմից: Գիւղական հասարակութիւնների ընտրողական ժողովը կարող է ներկայացուցիչ ընտրել և ոչ-գիւղացիներ: Այն գիւղացիները, որոնք գիւղական հասարակութեանը չեն պատկանում, մասնակցում են հողատէրերի ընտրութիւններին իբրև մասնաւոր հողատէրեր, եթէ ի հարկէ ցենդին համապատասխանող հող ունին:

Հողատէրերի, քաղաքացիների ու գիւղական հասարակութիւնների ընտրողական ժողովներում ընտրուած ներկայացուցիչները կազմում են գաւառական զեմսկիյ ժողով (УЪЗДНОЕ ЗЕМСКОЕ СОБРАНИЕ) և կոչուում են զեմսկիյ ձայնաւորներ (ГЛАСНЫЕ): Գրանք ժողովում են

¹⁾ Վոլոստը (ВОЛОСТЬ) մի միութիւն է, որ կազմուած է մի քանի գիւղերից: Վոլոստի տեղալին գործերը կառավարում և վարում են վոլոստնոյ ժողովը, վոլոստնոյ դատարանը և վոլոստնոյ տանուտէրը (ВОЛОСТНОЙ СТАРШИНА).,

որոշեալ ժամանակամիջոցում նստաշրջանի: Գաւառական զեմակից ժողովը ընտրում է գաւառական զեմակից վարչութիւն, տեղային վարչութեան համար զանազան անձնաւորութիւններ և վերջապէս ձայնաւորներ նահանգական զեմակից ժողովի համար: Գաւառական զեմակից վարչութիւնը, որ կազմւում է ամենաքիչը 3 ու ամենաշատը 6 անդամից և ունի մի նախագահ, համարւում է գործադիր օրգան, գործադրում է գաւառական ժողովի վճիռները: Բացի դրանից, հարցերի մեծ մասը առաջարկւում է գաւառական ժողովին վարչութիւնից և վճուում է վարչութեան մէջ: Նահանգի զանազան գաւառական զեմակից ժողովներից ընտրւած ձայնաւորները, ժողովելով նահանգական քաղաքում նստաշրջանի, կազմում են նահանգական զեմակից ժողով (губернское земское собрание), որ իւր միջից ընտրում է նահանգական զեմակից վարչութիւն (губернская земская управа) մի նախագահով:

Այդպիսով զեմակից միութիւնները գաւառական և նահանգական են: Նահանգների զեմասովոնները իրար հետ կապ չ'ունին: Գիւղական հասարակութիւնները և վոլոստների զեմսովոի մասը չ'են կազմում: Նրանց մէջի հաստատութիւններն ու պաշտօնները համարւում են ոչ թէ զեմակից, այլ հասարակական հաստատութիւններ ու պաշտօններ՝ քաղաքային հաստատութիւնների ու պաշտօնների նման: Գիւղական հասարակութիւններն ու վոլոստները, մինչև 1889-ի յուլիսի 12-ի օրէնքը, ենթարկւում էին «Գիւղական գործերի ատեանների» (присутствіе по крестьянскимъ дѣламъ) զեմակից նաչալնիկ կոչւող նոր պաշտօնեաների իշխանութեանը:

Տեղային ինքնավարութիւն, զեմսովո, ունեն Եւրոպական Ռուսաստանի միայն 34 ներքին նահանգները:

1889-ի յուլիսի 12-ի օրէնքը ոչնչացրեց ընտրողական հաշտարար դատաւորների ինստիտուտը, ստեղծեց զեմակից նաչալնիկներ, որոնք՝ նշանակւում են և ռոճիկ ստանում կառավարութիւնից, զիւղացիների համար իսկական նաչալնիկ են, իսկ միւս դասակարգերի համար միայն դատաւորներ: Բացց այդ և ուրիշ նորամուծութիւնների ու կազմակերպութեան մէջ մոտցած փոփոխութիւնների ու զեմսովոի քսանհինգ ամեայ գործունէութեան մասին միւս անգամ: